



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԿԵՆՏ» ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Handwritten signature

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«22» 06 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 57

Ձեռնարկողը՝

<<Սևանի իշխան>> ՓԲԸ

Ք. Երևան, Ագարության 27

Գործունեությունը՝

Կարճադրյուր համայնքի ձկնաբուծական համալիրի սելեկցիոն փորձարկության, բացօթյա ավազանների և դրան պատկանող ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
<< Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> տնօրեն՝



Handwritten signature

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 57

<22> 06 2017թ.


«Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ձկնաբուծական համալիրի սելեկցիոն փորձարարական, բացօթյա ավազանների և դրան պատկանող ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր»

Ձեռնարկող՝ <<Սևանի իշխան>> ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ «Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր համայնք

<<Սևանի իշխան>> ՓԲԸ կողմից «Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի տարածքում ձկնաբուծական համալիրի սելեկցիոն տնտեսության, բացօթյա ավազանների և դրան պատկանող ենթակառուցվածքների կառուցման տնտեսական գործունեությունն իրականացվելու է «Կառավարության 03.04.2014թ. №13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի» (այսուհետև «Համալիր ծրագիր») շրջանակներում: Համալիր ծրագիրն ուղղված է Սևանա լճի ձկնատեսակների բնական պաշարների և խախտված էկոհամակարգի վերականգնմանը:

<<Սևանի իշխան>> ՓԲ ընկերությանը ձկան սելեկցիոն տնտեսության և բացօթյա ավազանների կազմակերպման համար, «Կառավարության 4 սեպտեմբերի 2014թ N 972-Ա որոշմամբ կառուցապատման իրավունքով տրամադրվել է հողատարածք, որը գտնվում է «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում՝ Վարդենիսի տեղամասի Կարճաղբյուր համայնքի վարչական սահմաններում: Նախագծված տնտեսությունը Սևանա լճից գտնվում է 1100 մ հեռավորության վրա: Տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում ($a=0.3g$), մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1912-1914մ սահմաններում, ստորգետնյա ջրերն ունեն համատարած հորիզոն և տեղադրված են 0.7-1.8մ խորություններում:

Դիտարկվող տարածքին բնորոշ են՝ ժամանակակից լճա-գետային նստվածքների վրա ձևավորված կոպճային և ավազակոպճային հողագրունտների տիպերը, որտեղ տարածված են տափաստանային և լճի ջրերից ազատված համալիրներ՝ թփուտային բուսականության տեսքով: Համաձայն նախագծային տեղեկատվության՝ գործունեության համար ընտրված տարածքներում բացակայում են էնդեմիկ, հազվագեղև հանդիպող և անհետացած «Բույսերի Կարմիր Գրքում (2010թ.) գրանցված բուսատեսակները:



Մ. Գրիգորյան ԾԷՇ Օրինակ *Մ. Գրիգորյան*

Նախատեսվող սելեկցիոն տնտեսությունը ծառայելու է Սևանի իշխանի բազմացման համար և կազմակերպվելու է Ֆինլանդիայի Բնական Պաշարների Ինստիտուտի (LUKE Institute, Finland) հետ համատեղ կնքված պայմանագրի շրջանակներում: Սելեկցիոն տնտեսությունում հիմնականում ձևավորվելու է ապագա ծնողական կազմը, որից հետագայում ստացվելու է մանրածկան գործարանի մանրածուկը և ցանցավանդակներում աճեցվող ապրանքային ձուկը: Գործունեությունն ունի կարևոր նպատակներ, որոնցից առաջինը՝ գրագետ բուծման արդյունքում խուսափել միջազգակցական մոտ կապեր ունեցող առանձնյակների խաչասերումից, ինչը կարող է հանգեցնել ոչ ցանկալի հետևանքների /ինչպես օրինակ՝ տարատեսակ հիվանդությունների և ոչ դրական ազդեցություն՝ պոպուլյացիայի գենոֆոնդի վրա/: Որպես կարևորագույն բնապահպանական նպատակ՝ սելեկցիոն տնտեսությունում (բազմացման կայանում) օգտագործվելու է միայն գենետիկորեն մաքուր Գեղարքունի իշխան՝ բացառելով կենսախթանիչների օգտագործումը: Տնտեսությունում երկրորդ բաղադրիչը և նպատակը՝ արդյունաբերական լավագույն հատկանիշներով օժտված ձկան ստացումն է: Մասնավորապես տնտեսությունում առկա 200 ընտանիքներից սերնդեսերունդ ընտրվելու են այն ընտանիքները, որոնք առավելագույնս նպաստելու են որակյալ արտադրանքի ստացմանը:

Նախագծված սելեկցիոն տնտեսության արտադրական գործընթացների համար որպես ջուր նախատեսվում է օգտագործել տարածքի <<Կարճաղբյուր>> կոչվող աղբյուրի ջուրը: Այդ ջրերը հոսում են բնակավայրից ներքև ընկած տեղանքում և չեն օգտագործվում բնակավայրի ջրամատակարարման համար: Համակարգում օգտագործվող ջրի 95-97%-ը շրջանառվում է, մաքրվում և կրկին հետ է մղվում տնտեսություն: Տնտեսության համար պահանջվող՝ 40/վրկ ջրառը կիրականացվի թիվ 457 ջրաղբյուրներից: Յուրաքանչյուր աղբյուրից բետոնե ջրընդունիչ հանգույցներով ջրերը հավաքվում և հեռացվում են $dy=400$ մմ ջրատարով դեպի ձկնաբուծական համալիր, որտեղից ճյուղավորվում է սելեկցիոն տնտեսություն (աղբյուրների վերաբերյալ հիդրոտեկրաբանական տեղեկատվությունն առկա է հայտում): Համաձայն կատարված հետազոտությունների նշված ջուրը չի պարունակում մասնիկներ և ունի ցածր սննդարար արժեք: Այն ոչ պաթոգենային է և կարող է նվազեցնել հիվանդությունների ներթափանցումը արտադրություն:

Տնտեսության համար էլեկտրաէներգիայի սպառումը հաշվվում է մոտ 45 կԿ: Էլեկտրաէներգիայի խափանման, կամ անջատման դեպքում, սարքավորումների անվտանգ և ապահով աշխատանքի համար որպես պահուստային էլեկտրաէներգիայի աղբյուր նախատեսվում է տեղադրել գեներատոր:

Նախագծված տնտեսությունն իր արտադրական պլաններին համապատասխան կներառի տարբեր բացօթյա ավազաններ, որոնք ծառայելու են տարբեր նպատակների համար՝

- բուման համար նախատեսված ձկների բացօթյա ավազաններ, որոնք ձմռան ցուրտ եղանակին /երբ Սևանա լճի ջերմաստիճանը 10°C -ից քիչ է/ հարմար միջավայր են 10°C ջրում ձկներին կերակրելու համար, ինչը կարող է նպաստել ձկների արագ աճին և ժամանակի խնայողությանը:

- ավազաններ, որոնք կարող են հանդիսանալ մայրական կազմը պահպանելու և ընտրելու համար պահուստային վայր:

Ավազանների միջոցով, ջրի բազմանգամյա օգտագործման և ջրային պաշարների վերաօգտագործման եղանակներով անհրաժեշտության դեպքում կստեղծվի հնարավորություն՝ համակարգը դարձնել ամբողջական փակ (RAS):

Սելեկցիոն տնտեսությունը և դրան պատկանող ենթակառուցվածքները ներառում են հետևյալ կառուցվածքները՝ 1087.2 մ² կառուցապատման մակերեսով ձկան սելեկցիոն



տնտեսության մասնաշենք, ինկուբատորի տարածք, որտեղ տեղադրվող ինկուբատորներում իրականացվելու է ձկնկիթի ինկուբացման գործընթացը: Փոքր ավազանների տարածք (որը զբաղեցնում է 600 քմ, ներառում՝ 1մ տրամագծով և 0,5մ բարձրությամբ 200 հատ ավազաններ), որտեղ ինկուբատորից տեղափոխված թրթուրը աճեցվելու է մինչ 30գ: Ավազանների մաքսիմալ հզորությունը կկազմի 600 կգ:

Խոշոր ավազանների տարածք (որը զբաղեցնում է 270 քմ, ներառում՝ 2 մ տրամագծով և 1 մ բարձրությամբ 24 մեծ ավազաններ), որոնք ծառայելու են տարբեր նպատակների համար, այդ թվում՝ հիվանդությունների բուժման և կանխարգելման համար, որպես փորձարարական զոնա և ձկների համար կերի օպտիմալ քանակների, տեսակի, օպտիմալ կերային ռեժիմի փորձարարական զոնա: Կախված տարեկան պլանավորված փորձերի քանակից, այս հատվածի հզորությունը չի կարող գերազանցել 1500 կգ:

50-150 գրամ ձկան բուման բացօթյա ավազաններ (որը զբաղեցնում է 15,000 մ² մակերես, բաղկացած է 26 ուղանկյուն ավազանաններից) և մայրական կազմի բացօթյա ավազաններ (որի զբաղեցրած տարածքը կկազմի 14000 քմ մակերես և կներառի 20 ուղղանկյուն ավազանաններ՝ յուրաքանչյուրը՝ 20մ երկարության և 5 մ լայնությամբ, 2 մ բարձրությամբ): Ավազանները ձկով մատակարարվելու են ձկնարուծական տնտեսություններից և Սևանա լճում տեղակայված ցանցավանդակներից: Ենթակառուցվածքները ներառում են նաև՝ հսկիչ անցագրային կետ, ձկան կթելու և ախտահանելու համար նախատեսվող շինություն՝ բաղկացած 7 ե/բ ավազաններից:

Սելեկցիոն տնտեսության աշխատանքային տարեկան ցիկլը սկսվում է ինկուբատորի հատվածից, որտեղ ինկուբացվում է նախապես բեղմնավորված ձկնկիթը: Տվյալ հատվածը տարեկան ծանրաբեռնված է լինելու առավելագույնը երեք ամիս՝ կախված ինկուբատորում առկա ջրի ջերմաստիճանից: Թրթուրների դեղնուցապարկը մաշվելուց հետո, երբ հնարավոր է դառնում արտաքին սնուցումը, տեղափոխվում են տնտեսության հաջորդ հատված, որտեղ՝ 200 փոքր ավազանների մեջ (յուրաքանչյուր ավազան համապատասխանում է մեկ սելեկցիոն միավորի (ընտանիքի) որը բաղկացած է լինելու 70 – 100 առանձնյակներից) ձկներն աճեցվելու են մինչև 30 գ: 30 գ դառնալուց հետո յուրաքանչյուր ընտանիքից ընտրվում է 20 ձուկ, որոնք նշակրվում և տեղափոխվում են բացօթյա ավազան, որն արդեն սելեկցիոն տնտեսության միավոր չէ: Տվյալ ցիկլի տևողությունը կախված է ջրի ջերմաստիճանից և կարող է տևել առավելագույնը 10 ամիս (եթե ջրի միջին ջերմաստիճանը 10°C): Տվյալ հատվածում բացառված է բուժանյութերի կիրառումը:

Տնտեսությունում ձկների օպտիմալ աճի համար, կարևոր է հաշվեկշռված սննդակարգի պահպանումը: Որպես կեր՝ սելեկցիոն տնտեսության համար օգտագործվելու է միայն միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների կողմից արտադրված կերեր, որոնք հատուկ արտադրվում են սաղմոնային ձկների համար և պատրաստված են բնական հումքից: Տնտեսության փոքր ավազանների առավելագույն օրական կերածախսը կկազմի 12 կգ, իսկ մեծ ավազաններինը՝ կախված ավազանների բեռնվածությունից, առավելագույն ծանրաբեռնվածության դեպքում կկազմի 10 կգ: Կերային նստվածքներ ավազանների հատակին չեն առաջանալու, քանի որ կերակրման գործընթացն իրականացվելու է սահմանված նորմերով և կերի ամբողջ քանակությունը յուրացվում է ձկան կողմից:

Շնորհիվ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, արտադրական գործընթացների համար ջրի օգտագործումը համեմատաբար կարող է լինել քիչ ծավալներով, իսկ արդյունքում՝ հեռացվող արտահոսքերը կարող են հասնել նվազագույնի: Տնտեսությունում ձկնարուծական արտահոսքերը բաժանվում են երկու խմբի՝ համեմատաբար մաքուր ջուր, որը նախատեսվում է օգտագործել բացօթյա ավազաններում ձկնարուծության նպատակներով և ընդհանուր համակարգի կոյուղաջրեր, որոնք

տնտեսության արտադրական տարածքից կոյուղատարի միջոցով հեռացվում են <<Սևանի իշխան>> ՓԲԸ արտադրական տարածքում տեղադրվող կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան:


Ներկայացված հայտում վերլուծվել է նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես շինարարական աշխատանքների ընթացքում, այնպես էլ շահագործման փուլում: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ են առաջանում ավազանների և շինությունների հիմքերի փորման, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման ժամանակ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի ժամանակ, դիզելային վառելիքի այրման արդյունքում: Շահագործվելու են 5 հատ ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցներ՝ շինարարության 6 ամսյա ժամանակահատվածում: Քանի որ այդ արտանետումները կարճաժամկետ են, քանակները՝ փոքր, հետևաբար չեն կարող ունենալ զգալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Շինարարության փուլում, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (հողային և ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) առաջացող ազդեցությունների կանխման, կամ նվազեցման համար հայտում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ: Մշակվել է նաև բնապահպանական կառավարման պլան, որում բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը գնահատվել են՝ 13480 հազ.դրամ:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է աշխատողների կենցաղային, տնտեսական կարիքների և շինարարական հրապարակների ջրցանի համար: Այդ նպատակի համար ջրառն իրականացվելու է Կարճաղբյուր համայնքի ջրամատակարարման ցանցից՝ 182.4մ³/ժամ. (կամ 1.38 մ³/օր) ծավալով: Ջրահեռացումը կկազմի 98 մ³/2.ժամ (կամ 0.74 մ³/օր): Շինարարության ժամանակ առաջացող կեղտաջրերի հեռացման համար նախատեսված է տեղադրել մոդուլային կենսաբանական մաքրման կայան: Մաքրող կայանի ցուցանիշները կայանի ելքում պետք է ապահովեն հետևյալ ցուցանիշները՝ ԹԿՊ₅ - 2.0, ԹՔՊ - 30, Ֆոսֆատներ - 3.5, Մակերեսային ակտիվ նյութեր 0.5, կապված ազոտ (ամոնիումի աղերի) -2.0 և համապատասխանեն Կարճաղբյուր գետի ջրերի որակի (II դասի) պահանջներին: Մաքրված կեղտաջրերը կարող են օգտագործվել շինարարական աշխատանքների համար, կամ ոռոգման նպատակով:

Մանրածկան տնտեսության շահագործման փուլում մթնոլորտի աղտոտման աղբյուր են հանդիսանում տաք ջրամատակարարման համար նախատեսված ժամանակակից եվրոպական արտադրության՝ “Viessmann Vitomax” կաթսան և վթարային անջատումների համար նախատեսված գեներատորը, որի դրվածքային հզորությունը կազմում է 60կՎտ: Կաթսայատունն աշխատելու է բնական գազով, ջերմային էներգիայի առավելագույն հաշվարկային պահանջը կազմում է 1390 կվտ.ժամ: Մթնոլորտն աղտոտող նյութերի ընդհանուր քանակը հաշվարկվել է 4.38տ/տարի (կամ 0.14գ/վրկ): Կանխատեսվող առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակավայրերի համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Գեներատորի աշխատանքի ընթացքում կարող է առաջանալ ազոտի երկօքսիդ, ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, պինդ մասնիկներ, ծծմբի երկօքսիդ: Արտանետվող նյութերի ազդեցության գնահատումը կկատարվի՝ համեմատելով արտանետումները սանիտարական նորմերի հետ:

Տնտեսության շահագործման փուլում ջուրն օգտագործվելու է տեխնոլոգիական նպատակներով, ինչպես նաև սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար: Ջրի ընդհանուր ծախսը համակարգում կազմում է 2180մ³/օր, կամ 91մ³/ժամ: Տեխնոլոգիական ջրօգտագործումն (որի համար օգտագործվում է աղբյուրի ջուր) իրականացվելու է շրջանառու



համակարգով, արտադրական գործընթացներում հոսքաջրեր չեն առաջանում: Սպասարկող անձնակազմի կենցաղային ջրահեռացումը կկազմի 93.9մ³/տարի, կամ 0.257մ³/օր: Կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է «Ցիկլոն», կամ համարժեք ցուցանիշներով մոդուլային կենսաբանական մաքրման կայան: Տնտեսության կազմակերպման արդյունքում բացառվելու է արտադրական արտահոսքերը մակերևույթային ջրային ռեսուրս կամ շրջակա տարածքներ: Մաքրված հոսքաջրերն օգտագործվելու են տարածքում առկա կանաչապատ տրածքների ոռոգման նպատակով:

Տնտեսության աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի, կերի, առաջացող տիղմի և նստվածքի պահեստավորումը նախատեսված է փակ բետոնածածկ հատակով շինություններում, ինչի պարագայում կբացառվի այդ նյութերի տարածումը հողային ծածկույթի վրա:

Տնտեսության աշխատանքը համարվում է անթափոն: Շրջանառու ջրային հոսքերի մաքրման արդյունքում նստվածքներ չեն առաջանա: Նախագծի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արտադրական և շրջակա տարածքների կանաչապատում և բարեկարգում: Կանաչապատման աշխատանքները ներառում են տվյալ տարածքին և լանդշաֆտին բնորոշ ծառերի և թփերի տնկում:

Փորձաքննության գործընթացում ստացվել են՝ «ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի», «Ընապահպանության նախարարության՝ Կենսառեսուրսների և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունների, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարծիքները և առաջարկությունները: Նախնական գնահատման հայտի վերաբերյալ «Օրենսդրությամբ սահմանված կարգով, 07.06.2017թ. Կարճադրյուր համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում լրամշակված՝ նախագիծը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:


Նախագծի իրականացումը Կարճադրյուր բնակավայրի համար կարող է ունենալ նաև կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն՝ ստեղծելով աշխատատեղեր:

Այսպիսով, ամփոփելով և վերլուծելով նախատեսվող գործունեության նախնական գնահատման (որոնք իրականացվել են շինարարության և շահագործման փուլերի համար) և փորձաքննության արդյունքները պետք է նշել, որ նախագծում ներկայացված արդիական տեխնոլոգիական լուծումների, սարքավորումների կիրառման ինչպես նաև բոլոր արտադրական մոդուլների ճիշտ գործարկման պարագայում, սելեկցիոն տնտեսությունում կապահովվի ձկնաբուծարանի կայուն, անվտանգ շահագործումը՝ բացառելով Սևանա լճի ավազանի և շրջակա տարածքների վրա հնարավոր վնասակար ազդեցությունները:

Միաժամանակ ջրի փակ շրջանառու համակարգի կիրառումը կխնայի քաղցրահամ ջրի պաշարների զգալի քանակություն, իսկ տնտեսության առանձին մոդուլներում կիրառվող ֆիլտրացիոն համակարգերը կապահովեն ջրի մաքրումը կերի մնացորդներից և մանրածկան նյութափոխանակության արգասիքներից:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող մոդուլային կենսաբանական մաքրման կայանից հեռացվող ջրերի որակական ցուցանիշները պետք է համապատասխանեն «Կառավարության 27 հունվարի 2011 թվականի N75-Ն որոշմամբ սահմանված՝ «տարածքի 14 խոշոր գետային ավազանների գետերի ու գետերի առանձին հատվածների համար սահմանված գետերի ջրերի որակի էկոլոգիական նորմերին (Հավելված 15):



- Սելեկցիոն տնտեսությունում (բազմացման կայանում) Գեղարքունի իշխանի գենոֆոնդի պահպանության նպատակով անհրաժեշտ է բացառել այլ ձկնատեսակների օգտագործումը :
- Տնտեսությունում ոչ ցանկալի հետևանքներից զերծ մնալու նպատակով խուսափել միջազգակցական խաչասերումից, խաչասերման համար օգտագործելով միայն գենետիկորեն մաքուր Գեղարքունի իշխան՝ բացառելով կենսախթանիչների օգտագործումը:
- Գործունեության իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել մաքրման կայանից հեռացվող ջրի մոնիթորինգ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սևանի իշխան>> ՓԲԸ կողմից ներկայացված << Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ձկնաբուծական համալիրի սելեկցիոն տնտեսության, բացօթյա ավազանների և դրան պատկանող ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Հ. Մկրտչյան